

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

#### 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՞ր՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է **40,187,300 (քառասուն միլիոն հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից

հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմարժեկական վարչությունը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Կ 900011144129  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ  
Ք. Երևան, Արզումանյան 32-10  
«Էյ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ  
Հ/Կ 002182558001  
ՀՎՀՀ 01210095  
/ տնօրեն



**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**



**Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՑԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատվածներ	Կորուսվածքի նշանը	ԱՐՏՐՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍԱԳԱՆ ԵՐԿՐԸ
1.	pH միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE PH AVL	Roche Diagnostics	Շվեյցարիա
2.	pCO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE PCO2 AVL	Roche Diagnostics	Ավստրիա
3.	pO2 միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE PO2 AVL	Roche Diagnostics	Շվեյցարիա
4.	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE REF	Roche Diagnostics	Շվեյցարիա
5.	Na միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE NA+	Roche Diagnostics	Ավստրիա
6.	K միկրո էլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE K+	Roche Diagnostics	Ավստրիա
7.	Ca միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE CA++	Roche Diagnostics	Շվեյցարիա
8.	Cl միկրոէլեկտրոդ	Cobas b 121 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումներ:	MICRO ELECTRODE CL	Roche Diagnostics	Շվեյցարիա
9.	C3 ազդանյութի անրակալ	cobas b 121-ի համար նախատեսված C3 ազդանյութի անրակալ: Գործարանային փաթեթավորումով:	DOCKING MECHANISM PACK	Roche Diagnostics	Հնդկաստան
10.	API հանքային յուղ	քանակությունը 125 մլ, գործարանային փաթեթավորումներ	API Mineral oil	BioMerieux	Ֆրանսիա
11.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	Հավաքածուն պարունակում է 50 երկդ, գործարանային փաթեթավորումներ:	ANAEROBIC INDICATOR	BioMerieux	Գերմանիա
12.	BTA Subculture units	Հավաքածուն պարունակում է 100 հատ, գործարանային փաթեթավորումներ:	STERILE AIRWAY NEEDLES	BioMerieux	Չինաստան
13.	Գլյուկոզա 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆերտորն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլեկտրոմետրիայի սկզբունքով, ստրիպերը իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատեղում, սրուի, գործարանային փաթեթավորումներ:	Reflotron-Glucose 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
14.	Հիմնային ֆոսֆատազա 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆերտորն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլեկտրոմետրիայի սկզբունքով, ստրիպերը իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատեղում, սրուի, գործարանային փաթեթավորումներ:	Reflotron-ALP 30str.	Roche Diagnostics	Գերմանիա

15.	Պանկրատիկ-ամիլազա, 15 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 15 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-P-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
16	Ամիլազա 15 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 15 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Amylase 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
17.	Բիլիռուբին 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Bilirubin 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
18.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Cholesterol 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
19.	Կրեատինին կինազա 15 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 15 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-CK 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
20.	Կրեատինին 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Creatinin 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
21.	Գամմա գլոտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-GGT 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
22.	ULS 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-GPT 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
23.	UUS 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-GOT 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
24.	Կալիումի 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Potassium	Roche Diagnostics	Գերմանիա
25.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 30 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Triglyceride 30 Str.	Roche Diagnostics	Գերմանիա
26.	Միզանյութ 15 թեսթ	Նախատեսված է Ռեֆլոտրոն բիոքիմիական սարքի համար, որն աշխատում է ռեֆլակտոմետրիայի սկզբունքով, ստրիպները իրենցից ներկայացնում են չոր քիմիա, 15 ստրիպ հերմետիկ փակ կանխատերում, տուփ, գործարանային փաթեթավորումով:	Reflotron-Urea 15 Str.	Roche Diagnostics	Գերմանիա

27.	Տրանսպորտային միջավայր նմուշառման համար	Պլաստման ճողիլ քանակով, Սոյուարտ միջավայրով, պլաստման փորձանոթի մեջ: Ստերիլ գործարանային փաթեթավորմամբ:	UNI-TER sterile swab in polypropylene test tube. Stuart medium. Plastic stick. Individually wrapped.	Kima	Իտալիա
28.	Ստերիլ պոլիպրոպիլենային կոնտեյներ մեզի նմուշներ	150 մլ ճաշակով պտտապակե կախարչիկ ստերիլ պոլիպրոպիլենային կոնտեյներ մեզի նմուշառման համար, հաստ, աստիճանավորված մինչև 120 մլ, գործարանային փաթեթավորմամբ:	Sterile polypropylene container with label and screw cap.	Kima	Իտալիա
29.	Իմունոգլոբուլին E 100 թեստ	100 տեստ քանակով, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IgE G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
30.	Վիտամին D 100 թեստ	100 տեստ քանակով, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Vitamin D total G2 Elecsys cobas e 100	Roche Diagnostics	Գերմանիա
31.	Իմունոգլոբուլին E CS	Կալիբրատորը նախատեսված է համապատասխան ռեագենտի համար, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IgE CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
32.	Վիտամին D CS	Կալիբրատորը նախատեսված է համապատասխան ռեագենտի համար, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Vitamin D total G2 CS Elecsys	Roche Diagnostics	Գերմանիա
33.	Հարգենային լամպ	12V/100W իզոդիայամբ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված Cobas 400 plus անալիզատորի համար	LAMP HALOGEN 12V/100W ASSY	Roche Diagnostics	Գերմանիա
34.	C1/C2 Ազրանյութերի ամրակալ	Նախատեսված cobas b 121 անալիզատորի համար C1/C2 ազրանյութերի ամրակալ: Գործարանային փաթեթավորումով:	DOCKING MECHANISM C1/C2/S1	Roche Diagnostics	Հնդկաստան
35.	Թափոնի տարրային ամրակալ	Նախատեսված cobas b 121 անալիզատորի համար թափոնի տարրային ամրակալ: Գործարանային փաթեթավորումով:	DOCKING MECHANISM waste cobas b121	Roche Diagnostics	Հնդկաստան
36.	Հարիչ	Medica Pro R60 -ի ջրի ռեֆրիլիզատորի համար նախատեսված, 0.5 սմ, LC109, գործարանային փաթեթավորմամբ:	LC109 Ultra Microfilter	Elga	Ճապոնիա
37.	Քարթիչներ	Medica Pro R60 -ի ջրի ռեֆրիլիզատորի համար նախատեսված, LC174, գործարանային փաթեթավորմամբ:	LC174 Medpure L1 DI pack	Elga	Մեծ Բրիտանիա
38.	Նախնական զտիչ	Medica Pro R60 -ի ջրի ռեֆրիլիզատորի համար նախատեսված, LC177, գործարանային փաթեթավորմամբ:	LC177 L2 Pretreatment	Elga	ԱՄՆ
39.	Ռևերսիտոսմոսային զտիչ	Medica Pro R60 -ի ջրի ռեֆրիլիզատորի համար նախատեսված, LC180, գործարանային փաթեթավորմամբ:	LC180 Reverse Osmosis Module	Elga	ԱՄՆ
40.	CO2 զտիչ	Medica Pro R60 -ի ջրի ռեֆրիլիզատորի համար նախատեսված, LC181, գործարանային փաթեթավորմամբ:	E-cartridge Upgrade kit c/w LC181	Elga	Գերմանիա
41.	Ներկերի հավաքածու	Հավաքածու պարունակում է՝ MCDh 1 1X230մլ, MCDh 2 2X230մլ, MCDh 3 1X230մլ, MCDh 4 4X230մլ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված Ral StainBox սարքավորման համար:	KIT RAL STAINBOX MCDH	Sysmex	Ֆրանսիա
42.	Շնդերի միջավայր փոշի	միկրոօրգանիզմների աճեցման համար, 500 գր պլաստիկ փաթեթավորում, գործարանային փաթեթավորմամբ:	SCHAEGLER AGAR BASE	Lioflichem	Իտալիա

43.	Չոր մուցող բովիտն արգանակ	միկրոօրգանիզմների աճեցման համար, 500 գր պլաստիկ փաթեթավորում, գործարանային փաթեթավորումով:	NUTRIENT BROTH	Lioflichem	Խոսայիա
44.	Հակաբիոտիկի դիսկ Աուգմենտին	հակաբիոտիկային դիսկ 50 հատ սրվակում, գործարանային փաթեթավորումով:	Augmentin	Lioflichem	Խոսայիա
45.	Խնամքի հավաք e 411-ի կեն տարվա համար	cobas e 411 անալիզատորի կեն տարվա խնամքի համար նախատեսված հավաքածու, որը ներառում է միոցների ներդիրներ, խառնիչի գուռի և նմուշառման ասեղի խողովակ: Գործարանային փաթեթավորումով:	Kit Maintenance E2010/E411 6 months	Roche Diagnostics	Ճապոնիա
46.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	cobas e 411 անալիզատորի մեկ տարվա խնամքի համար նախատեսված հավաքածու, որը ներառում է չափիչ խցիկի խողովակներ, տեղափոխման մեխանիզմի զսպանակ և նմուշառման ասեղների ներդիրներ: Գործարանային փաթեթավորումով:	Kit service E411 12 month	Roche Diagnostics	Ճապոնիա

**Ապրանքները պեճը և ունենան**

1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության հանապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ:
2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը: (ներկայացվում է մատակարարման ժամանակ):
3. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան արժեքի պիտանելիության ժամկետի 1/2-ը:

**Այն չափաբաժինները, որոնց չափման միավորը սահմանված է «տրոփ» կամ «հավաքածու» և նշված չէ քանակական պարունակությունը հասկանալու N1**

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արգես խճուղի, Կենտրոնական դեղաբազա:


**ԳՆՈՐԴ**

ՀՀ Կառավարության նախարարություն  
ՀՀ Կառավարության նախարարի տեղակալ



**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ  
տնօրեն



**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**Բ. ԹՎԻՆԿՈՍՅԱՆ**

ԳՆԱՄԱՆ ԺԱՅՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ

Հ/Ի	Մարտնչի անվանում	Ձ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին/ՀՀ դրամ/	Ընդամենը գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումն ըստ 2018թ. հետևյալ երամասների	
						Երրորդ երամաս	Չորրորդ երամասի Ոչ ոչ քան 10.12.2018թ.
1.	pH միկրոէլեկտրոդ	տուփ	3	119,000	357,000	2	1
2.	pCO2 միկրոէլեկտրոդ	տուփ	3	293,000	879,000	2	1
3.	pO2 միկրոէլեկտրոդ	տուփ	4	234,000	936,000	2	2
4.	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	տուփ	3	142,000	426,000	2	1
5.	Na միկրո էլեկտրոդ	տուփ	4	124,000	496,000	2	2
6.	K միկրո էլեկտրոդ	տուփ	4	108,000	432,000	2	2
7.	Ca միկրոէլեկտրոդ	տուփ	4	111,000	444,000	2	2
8.	Cl միկրոէլեկտրոդ	տուփ	4	104,000	416,000	2	2
9.	C3 ազդանյութի անրակալ	տուփ	1	35,000	35,000		1
10.	API հանքային յուղ	հավաքածու	5	4,000	20,000	2	3
11.	Անաէրոբ գեներատորի ինդիկատորներ	հավաքածու	1	22,900	22,900	1	
12.	BTA Subculture units	հավաքածու	1	116,000	116,000	1	
13.	Գլյուկոզ 30 թեսթ	տուփ	110	21,000	2,310,000	50	60
14.	Հրմնային ֆոսֆատազա 30 թեսթ	տուփ	30	28,000	840,000	15	15
15.	Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ	տուփ	40	17,000	680,000	20	20
16.	Ամիլազա 15 թեսթ	տուփ	50	14,500	725,000	25	25
17.	Քիլոտրոփն 30 թեսթ	տուփ	110	24,000	2,640,000	50	60
18.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	տուփ	100	25,000	2,500,000	50	50
19.	Կրեատինին կինազա 15 թեսթ	տուփ	20	19,000	380,000	10	10
20.	Կրեատինին 30 թեսթ	տուփ	110	28,000	3,080,000	50	60
21.	Գամմա գլուտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ	տուփ	50	24,000	1,200,000	25	25
22.	ULS 30 թեսթ	տուփ	110	28,000	3,080,000	50	60
23.	LUS 30 թեսթ	տուփ	110	28,000	3,080,000	50	60
24.	Կալիումի 30 թեսթ	տուփ	50	33,000	1,650,000	25	25
25.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	տուփ	50	28,000	1,400,000	25	25
26.	Սիզանյութ 15 թեսթ	տուփ	110	14,500	1,595,000	50	60
27.	Տրանսպորտային միջավայր նմուշառման համար	հատ	2000	146	292,000	1000	1000
28.	Ստերիլ պոլիպրոպիլենային կոնտեյներ մեզի նմուշառման համար	հավաքածու	3000	97	291,000	1500	1500
29.	Իմունոգլոբուլին E 100 թեստ	հավաքածու	2	78,000	156,000	1	1
30.	Վիտամին D 100 թեստ	հավաքածու	2	355,000	710,000	1	1
31.	Իմունոգլոբուլին E CS	հավաքածու	2	25,500	51,000	1	1
32.	Վիտամին D CS	հավաքածու	2	26,350	52,700	1	1
33.	Հարգենային լանս	հատ	2	65,000	130,000	1	1

34.	C1/C2 Ազգանյութերի ամրակալ	տուփ	1	26,000	26,000	1
35.	Թափոնի տարրայի ամրակալ	տուփ	1	26,000	26,000	1
36.	Զտիչ	հատ	2	230,000	460,000	2
37.	Քարթրիջներ	հատ	4	220,000	880,000	4
38.	Նախնական գտիչ	հատ	4	460,000	1,840,000	4
39.	Ռևերսիտոմոտային գտիչ	հատ	1	1,300,000	1,300,000	1
40.	CO2 գտիչ	հատ	3	1,250,000	3,750,000	3
41.	Ներկերի հավաքածու	հավաքածու	1	110,000	110,000	1
42.	Շեղյերի միջավայր փոշի	Տուփ	1	30,000	30,000	1
43.	Չոր սնուցող բույրոն արգանակ	Տուփ	4	20,000	80,000	2
44.	Հակաբրտրտիկի դիսկ Աուգմետին	Տուփ	2	1,350	2,700	2
45.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	հատ	1	100,000	100,000	1
46.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	հատ	1	160,000	160,000	1
<b>Ընդամենը՝</b>					<b>40,187,300</b>	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ




*(Handwritten signature)*

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ  
տնօրեն



*(Handwritten signature)*  
ՀՀ ԿՈՆՍԵՐՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ ՓԲԸ

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ\*


Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդ	Ընդհանուր գին /գրամ/	Ըստ 2018թ ամիսների՝ անողական					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.18թ.-ը
1.	pH միկրոէլեկտրոդ	33691167/77/10/5	357,000	238,000	238,000	238,000	357,000	357,000	357,000
2.	pCO2 միկրոէլեկտրոդ	33691167/78/10/5	879,000	586,000	586,000	586,000	879,000	879,000	879,000
3.	pO2 միկրոէլեկտրոդ	33691167/79/10/5	936,000	468,000	468,000	468,000	936,000	936,000	936,000
4.	Ռեֆերենս էլեկտրոդ էլեկտրոդ	33691167/80/10/5	426,000	284,000	284,000	284,000	426,000	426,000	426,000
5.	Na միկրո էլեկտրոդ	33691167/81/10/5	496,000	248,000	248,000	248,000	496,000	496,000	496,000
6.	K միկրո էլեկտրոդ	33691167/82/10/5	432,000	216,000	216,000	216,000	432,000	432,000	432,000
7.	Ca միկրոէլեկտրոդ	33691167/83/10/5	444,000	222,000	222,000	222,000	444,000	444,000	444,000
8.	Cl միկրոէլեկտրոդ	33691167/84/10/5	416,000	208,000	208,000	208,000	416,000	416,000	416,000
9.	C3 ազոտայութի անոակալ	33691167/94/10/5	35,000	0	0	0	35,000	35,000	35,000
10.	API հանքային լուղ	33691167/97/10/4	20,000	8,000	8,000	8,000	20,000	20,000	20,000
11.	Անալոգր գեներատորի ինդիկատորներ	33691167/100/10/4	22,900	22,900	22,900	22,900	22,900	22,900	22,900
12.	BTA Subculture units	33691167/101/10/4	116,000	116,000	116,000	116,000	116,000	116,000	116,000
13.	Գլյուկոզ 30 թեսթ	33691167/105/10/5	2,310,000	1,050,000	1,050,000	1,050,000	2,310,000	2,310,000	2,310,000
14.	Հիմնային ֆոսֆատազա 30 թեսթ	33691167/106/10/5	840,000	420,000	420,000	420,000	840,000	840,000	840,000
15.	Պանկրեատիկ-ամիլազա, 15 թեսթ	33691167/107/10/5	680,000	340,000	340,000	340,000	680,000	680,000	680,000
16.	Ամիլազա 15 թեսթ	33691167/108/10/5	725,000	362,500	362,500	362,500	725,000	725,000	725,000
17.	Քիլիուրին 30 թեսթ	33691167/109/10/5	2,640,000	1,200,000	1,200,000	1,200,000	2,640,000	2,640,000	2,640,000
18.	Խոլեսթերոլ, 30 թեսթ	33691167/110/10/5	2,500,000	1,250,000	1,250,000	1,250,000	2,500,000	2,500,000	2,500,000
19.	Կրեատինին կինազա 15 թեսթ	33691167/111/10/5	380,000	190,000	190,000	190,000	380,000	380,000	380,000
20.	Կրեատինին 30 թեսթ	33691167/112/10/5	3,080,000	1,400,000	1,400,000	1,400,000	3,080,000	3,080,000	3,080,000
21.	Գամմա գլոտամիլ տրանսֆերազա, 30 թեսթ	33691167/113/10/5	1,200,000	600,000	600,000	600,000	1,200,000	1,200,000	1,200,000
22.	ULS 30 թեսթ	33691167/114/10/5	3,080,000	1,400,000	1,400,000	1,400,000	3,080,000	3,080,000	3,080,000
23.	UUS 30 թեսթ	33691167/115/10/5	3,080,000	1,400,000	1,400,000	1,400,000	3,080,000	3,080,000	3,080,000
24.	Կալիումի 30 թեսթ	33691167/116/10/5	1,650,000	825,000	825,000	825,000	1,650,000	1,650,000	1,650,000
25.	Տրիգլիցերիդների 30 թեսթ	33691167/117/10/5	1,400,000	700,000	700,000	700,000	1,400,000	1,400,000	1,400,000
26.	Միզանյութ 15 թեսթ	33691167/118/10/5	1,595,000	725,000	725,000	725,000	1,595,000	1,595,000	1,595,000
27.	Տրանսպորտային միջավայր նմուշառման համար	33691167/126/10/2	292,000	146,000	146,000	146,000	292,000	292,000	292,000
28.	Ստերիլ պոլիպրոպիլենային կոնտեյներ մեզի նմուշառման համար	33691167/127/10/4	291,000	145,500	145,500	145,500	291,000	291,000	291,000
29.	Իմունոգլոբուլին E 100 թեստ	33691167/129/10/4	156,000	78,000	78,000	78,000	156,000	156,000	156,000
30.	Վիտամին D 100 թեստ	33691167/130/10/4	710,000	355,000	355,000	355,000	710,000	710,000	710,000
31.	Իմունոգլոբուլին E CS	33691167/131/10/4	51,000	25,500	25,500	25,500	51,000	51,000	51,000
32.	Վիտամին D CS	33691167/132/10/4	52,700	26,350	26,350	26,350	52,700	52,700	52,700
33.	Հարդենային լամպ	33691167/133/10/2	130,000	65,000	65,000	65,000	130,000	130,000	130,000
34.	C1/C2 Ազոտայութի անոակալ	33691167/134/10/5	26,000	0	0	0	26,000	26,000	26,000

35.	Ծախսերի տարրային ամօրակալ	33691167/135/10/5	26,000	0	0	26,000	26,000	26,000	26,000
36.	Զտիչ	33691167/136/10/2	460,000	460,000	460,000	460,000	460,000	460,000	460,000
37.	Քարտրիջներ	33691167/137/10/2	880,000	880,000	880,000	880,000	880,000	880,000	880,000
38.	Նախնական գտիչ	33691167/138/10/2	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000	1,840,000
39.	Ունեւորությունային գտիչ	33691167/139/10/2	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000	1,300,000
40.	CO2 գտիչ	33691167/140/10/2	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000
41.	Ներկերի հավաքածու	33691167/141/10/4	110,000	110,000	110,000	110,000	110,000	110,000	110,000
42.	Շեղբերի միջավայր փոշի	33691167/144/10/5	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000
43.	Չոր սնուցող բույրի աբզանակ	33691167/145/10/5	80,000	40,000	40,000	80,000	80,000	80,000	80,000
44.	Հակաքիտիկի դիսկ Առաջնորդին	33691167/150/10/5	2,700	2,700	2,700	2,700	2,700	2,700	2,700
45.	Խնամքի հավաք e 411-ի կես տարվա համար	33691167/153/10/2	100,000	100,000	100,000	100,000	100,000	100,000	100,000
46.	Խնամքի հավաք e 411-ի մեկ տարվա համար	33691167/154/10/2	160,000	160,000	160,000	160,000	160,000	160,000	160,000
<b>Ընդամենը՝</b>			<b>40,187,300</b>	<b>23,993,450</b>	<b>23,993,450</b>	<b>40,187,300</b>	<b>40,187,300</b>	<b>40,187,300</b>	<b>40,187,300</b>

վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

«Արտադրության նախարարություն  
«Արտադրության նախարարի տեղակալ




*(Handwritten signature)*

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՊՈՂ

«Կոնցեռն-Էներգոմարշ» ՓԲԸ  
տնօրեն



*(Handwritten signature)*

Բ. ԹԱՆԿՄԱՆ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_

հհ \_\_\_\_\_

հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**  
**ՎԱՋՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    »    «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

**Կ.Տ.**

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

**Կ.Տ.**

ԱԿՏ N \_\_\_\_\_  
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_  
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
Ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
\_\_\_\_\_  
ստորագրություն